# ՏԵՂԵԿԱՆՔ

## Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

### Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

### Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութուն

### Իրավական ակտի տեսակ

Որոշում

### Ոլորտ

Սոցիալական ապահովություն

### Հանրային քննարկման ժամկետ

17/02/2020 - 03/03/2020

### Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 2 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 2 առաջարկ

### Քվեարկության արդյունքներ

5 կողմ

0 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**03/03/2020**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 276-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| h/h | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Karen Abrahamyan<br>28.02.2020 11:00:43 | Voroshman naxagic@ erbvanic uji mej kmtni?qnnarkman avartic heto(03.03.2020-@ verjnajamketne). | Համաձայն նախագծի 2-րդ կետի որոշումն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: | |
| 2 | "Տնտեսական իրավունքի կենտրոն" Հասարակական կազմակերպություն<br>19.02.2020 01:15:05 | ԿԱՐԾԻՔ ՀՀ ԱՍՀՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 276-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱՍՀՆ կողմից ՀՀ ԱՆ պաշտոնական կայքի https://www.e-draft.am/ | 1. Չի ընդունվել, քանի որ մինչև 18 տարին լրացած երեխաներին հաշմանդամության խումբ չի սահմանվում, այլ սահմանվում է «հաշմանդամ երեխա» կարգավիճակ, և 18 տարեկանից հետո առանց անձի օբյեկտիվ զննության խմբորոշում իրականացնել հնարավոր չէ, | |

| | |
|---|---|
| հարթակում ներկայացված «Բժշկասոցիալական վերափորձաքննությունները հատուկ ընթացակարգով իրականացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ 1) քննարկվել էր 2020 թվականի հունվարի 9-24 ընկած ժամանակահատվածում (https://www.e-draft.am/projects/2221/about): Նախագիծ 1-ին կողմ էին քվեարկել 3 և դեմ՝ 2 անձ կամ կազմակերպություն: Ընդ որում, այդ հարթակի «Ամփոփաթերթ» բաժնում ներկայացված չէին հանրային քննարկմանը մասնակիցների կարծիքները, առաջարկությունները և դրանց վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ դիրքորոշումներն ու ձեռնարկված միջացառումները: ՀՀ ԱՍՀՆ կողմից 2020 թ" փետրվարի 17-ից ՀՀ ԱՆ պաշտոնական կայքի https://www.e-draft.am/ հարթակում հանրային քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նոր նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ 2) (https://www.e-draft.am/projects/2286): Հարկ է նշել, որ դրական ենք գնահատում այն հանգամանքը, որ | առավել ևս հնարավոր չէ բժշկասոցիալական փորձաքննական նոր որոշումը (վարչական ակտը)՝ նախորդ տարվա բժշկասոցիալական փորձաքննական որոշումով, 1 տարի ժամկետով տրամադրելը, քանի որ նախորդ որոշումը «հաշմանդամ երեխա» կարգավիճակին է վերաբերում: 2. Չի ընդունվել, քանի որ նախագծի 1"2 կետի 1) ենթակետի գ" ենթակետով հստակ նշված է «նախորդ տարվա բժշկասոցիալական փորձաքննական որոշում», այն է՝ անձի նկատմամբ նախորդ բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ կայացված (և անձին տրամադրված) որոշումը նույնությամբ թողնել ուժի մեջ ևս մեկ տարի ժամկետով: 3. Չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշման 12-րդ |

| | |
|---|---|
| հանրային քննարկման քվեարկության արդյունքները հաշվի առնելով ՀՀ ԱՍՀՆ Նախագիծ 1-ը փոխարինել է նորով՝ Նախագիծ-2-ով ում և նախորդ տարբերակում առկա բացթողումներն ամբողջությամբ շտկվել են Նախագիծ 2-ում: Նախագիծ-2-ի կարգավորումները կարծեք թե ուղղված են վերափորձաքննության դիմող հաշմանդամություն ունեցող անձանց վարչարարական քաշքշուկից թեթևացնելուն և կոռուպցիոն ռիսկերից խուսափելուն: Այդ կարգավորումներով բարելավվում է վերափորձաքննության դիմող հաշմանդամություն ունեցող որոշ խմբի անձանց կարգավիճակը և նրանք ստիպված չեն լինելու կատարել լրացուցիչ ծախսեր պահանջող հիվանդանոցային բուժ օգնություն ստանալու, մասնագիտացված կազմակերպություններում դժվարամատչելի հետազոտություններ անցնելու ուղղությամբ: Սակայն վերոհիշյալի հետ մտահոգություն է առաջացնում, որ այդ իրավակարգավորումները չեն տարածվելու «հաշմանդամ երեխա» կարգավիճակից հետո 18 տարին լրանալու, 17 տարեկանից հետո հաշմանդամությունը «մինչև 18 տարին լրանալը» ժամկետով և օրենքով տարիքային | կետով արդեն իսկ հստակ սահմանված է բժշկասոցիալական փորձաքննական որոշումն անձին հանձնելու ժամկետները: 4. Չի ընդունվել, քանի որ նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունելուց հետո միայն կմշակվեն անձի ֆունկցիոնալության գնահատման ընթացակարգերի վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերը: 5. Չի ընդունվել, քանի որ 16 տարեկանը լրացած անձինք ունեն ՀՀ անձնագիր ստանալու իրավունք, հետևաբար 16 տարեկանն ինքը կարող է դիմել հանձնաժողով: 6. Ընդունվել է և համարակալումը շտկվել: |

կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալուց հետո անժամկետ սահմանելու դեպքերում իրականացվող բժշկասոցիալական վերափորձաքննությունների վրա: Կարծում ենք, որ այդ խբերում ընդգրկված անձանց հատկապես պետք է վերաբերեն նոր իրավակարգավորումները, մինչև ամբողջությամբ կփոխվեն բժշկասոցիալակն փորձաքննությունների կարգավորումները:

Նախագիծ-2-ի 1-ին կետով առաջարկվող 1"2 կետի 1) ենթակետի գ" ենթակետն կարիք ունի լրացուցիչ հստակեցման և խմբագրման, քանզի այդ նախադասության «նախորդ տարվա բժշկասոցիալական փորձաքննական որոշումով, 1 տարի ժամկետով,» բառերը շփոթություն են ստեղծում: Միաժամանակ այդ մասում նշված չէ, թե վերափորձաքննվողին ի՞նչ ժամկետում պետք է տրամադրվի բժշկասոցիալական փորձաքննական նոր որոշումը (վարչական ակտը): Նախագիծ-2-ի 1-ին կետով առաջարկվող 1"2 կետի 1) ենթակետի ե" ենթակետին հաջորդող 1-ին բուլիտում գրված է" «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև սույն որոշման «2.» կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը ներդնել մասնագետների ռեեստրից պատահական ընտրությամբ հանձնաժողովների

կազմավորման համակարգ:»: Մինչդեռ մեզ ոչ մեկիս հայտնի չէ, թե ինչ իրավական ակտով և երբ է սահմանվել «պատահական ընտրությամբ հանձնաժողովներ» ստեղծելու կարգը: Եւ ընդհանրապես այդ նախադասությունը կարիք ունի հայեցի հստակ խմբագրման: Կարծում ենք, որ Նախագիծ-2-ով առաջարկվող նոր 10"3 կետում «16» թիվը պետք է փոխարինվի «18» թվով, քանի որ 16-ից բարձր տարիքի երեխաները՝ մինչև 18 տարեկան դառնալը նույնպես ունեն խնամակալներ և այդ տարիքի երեխաներին նույնպես պետք է վերաբերի առաջարկվող իրավակարգավորումը: Մեզ համար անհասկանալի է մնում «Անձը կամ նրա ներկայացուցչը հեռակա բժշկասոցիալական փորձաքննության կարող է դիմել հաշմանդամության սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում:» իրավակարգավորմամբ ինչ նպատակ է հետապնդում երեք ամսով սահմանափակելու նորմը: Բացի վերոհիշյալից Նախագիծ-2 ում բավականին շատ են օրենսդրական տեխնիկայի պահանջներին հակասող համարակալումներն ու ձևակերպումները, ինչի արդյունքում առաջանում է շփոթմունք, տեքստին հղում տալն ըստ հերթական համարների դժվարություններ է

հարուցում: Ելնելով վերոհիշյալից առաջարկում ենք՝ 1. Նախագիծ-2-ի 1-ին կետով առաջարկվող 1"2 կետի 1) ենթակետի խմբագրությունից հանել ««հաշմանդամ երեխա» կարգավիճակից հետո 18 տարին լրանալու, 17 տարեկանից հետո հաշմանդամությունը «մինչև 18 տարին լրանալը» ժամկետով և օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալուց հետո անժամկետ սահմանելու դեպքերում իրականացվող բժշկասոցիալական վերափորձաքննությունների:» բառերը, 2. Նախագիծ-2-ի 1-ին կետով առաջարկվող 1"2 կետի 1) ենթակետի գ" ենթակետը խմբագրել՝ հստակեցման առումով այնպես, որպեսզի պարզ լինի, թե «նախորդ տարվա բժշկասոցիալական փորձաքննական որոշումով, 1 տարի ժամկետով,» բառերը ինչ են նշանակում և ինչու այդ որոշումը նախորդ տարի չէր տրվել, 3. Նախագիծ-2-ի 1-ին կետով առաջարկվող 1"2 կետի 1) ենթակետի գ" ենթակետում հստակորեն նշել, թե վերափորձաքննվողին ինչ ժամկետում պետք է տրամադրվի բժշկասոցիալական փորձաքննական նոր որոշումը (վարչական ակտը), 4. Նախագիծ-2-ի 1-ին կետով առաջարկվող 1"2 կետի 1) ենթակետի ե" ենթակետին հաջորդող 1-ին բուլիտում գրված

նախադասությունը «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև սույն որոշման «2.» կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը ներդնել մասնագետների ռեեստրից պատահական ընտրությամբ հանձնաժողովների կազմավորման համակարգ:» հստակեցնել, հայեցի հստակ խմբագրել և հստակ նշել, թե որ իրավական ակտին համապատասխան պետք է կազմավորվեն «պատահական ընտրությամբ հանձնաժողովներ»: 5. Նախագիծ-2-ով առաջարկվող նոր 10"3 կետում «16» թիվը պետք է փոխարինվի «18» թվով: 6. Առաջարկում ենք Նախագիծ-2 ում կատարել օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխան համարակալում: Հարգանքով, Մովսես Արիստակեսյան «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ